ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

20 դեկտեմբերի, 2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՄՈՒԴՄԵՓ ԷՅԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գագիկ Թամազյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2022 թվականի փետրվարի 1-ի ««11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը և ծրագրի 2022 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածությունը հաստատելու մասին» N 95-Ա հրամանը (այսուհետ՝ հրաման), «Մուդմեփ Ալֆա 2.0» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել հրամանով նախատեսված գումարից՝ 5,000,000 (չորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել հրամանով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. Իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4 սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը՝ պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2 նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2 կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3 իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4 իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

2.4.10 Ապահովել պատշաճ մասնակցություն նախարարության կողմից «Գաղափարի փուլում գտնվող պրոդուկտների համար» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախատեսված ինկուբացիոն բնույթի կրթական դասընթացներին:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը (հավելված 4) և հաշվետվությունը: Ընդ որում, կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը՝ 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

5.2. Կազմակերպությանը մնացած վճարումները կատարվում են սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի հավելված 1-ում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարության կողմից ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Կազմակերպության կողմից Պայմանագրով սահմանված վերջնաժամկետներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ դիմումները Նախարարությանը պետք է ներկայացնել գործող վերջնաժամկետից առնվազն 10 օր առաջ: Սույն կետի խախտման դեպքում Նախարարությունն իրավունք ունի չդիտարկել կազմակերպության դիմումը:

9.7. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010 ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	«ՄՈՒԴՄԵՓ ԷՅԱՅ» ՍՊԸ ք. Աշտարակ, Ե. Շահազիզի 64, 0201 Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2051322102661002 ՀՎՀՀ 05030356 Տնօրեն՝ Գագիկ Թամազյան

Հավելված 1
2022թ. դեկտեմբերի 20-ին
կնքված **N ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02** պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանում	նկարագիր	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողություններ	ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման չափանիշներ	միջոցառման իրականացման վերջնաժամկետ	հաշվետվության ներկայացման կարգ ու ժամկետ	պահանջվող գումար (ՀՀ դրամ)
1	Պրոդուկտ Դիզայն	Ծրագրի Interface դիզայն:	Ծրագրի հիմնական էջի դիզայնի պատվիրում և վերահսկում:	Պատրաստի դիզայն պրոեկտ հիմնական էջի համար մոքափ տարբերակով:	01.03.2023	15.03.2023	100,000
2	Վեբ Դիզայն	Վեբ էջի UiUx դիզայն, դոմեյնի գնում:	Վեպ էջի դիզայնի պատվիրում և վերահսկում:	Պատրաստի կայքի դիզայն ամբողջ ինֆորմացիայով, բաժանորդագրության հնարաորությամբ և վիդեո բլոգի հատվածով:	01.02.2023	15.02.2023	200,000
4	Frontend1	Admin Panel Frontend ծրագրավորում:	Admin Panel Frontend PRD-ի ստեղծում և պատվիրում:	Պատրաստի Admin Panel կցված մոքափին:	01.05.2023	15.05.2023	500.000
5	Frontend2	User Interface Frontend ծրագրավորում:	User Interface Frontend PRD-ի ստեղծում և պատվիրում:	Պատրաստի User Interface կցված մոքափին:	01.05.2023	15.05.2023	200.000
6	Backend1	Backend ծրագրավորում:	Backend SRS և architecture-ի պատվիրում:	Պատրաստի SRS և architecture:	01.05.2023	15.05.2023	300.000
7	Backend2	Backend ծրագրավորում:	Backend socket building պատվիրում:	Պատրաստի socket system:	01.05.2023	15.05.2023	800.000
8	Սերվերի պատվեր	Արհեստական ինտելեկտի վերապատրաստման համար նախատեսված սերվերի պատվիրում:	4x NVIDIA GPU Server with Single AMD EPYC Processor սերվերի պատվիրում:	Պայմանագիր սերվերի պատվիրման մասին:	01.03.2023	15.03.2023	2,560,000

9	Սերվերի ներմուծում	Արհեստական ինտելեկտի վերապատրաստման համար նախատեսված սերվերի ներմուծում:	4x NVIDIA GPU Server with Single AMD EPYC Processor սերվերի ներմուծում:	Սերվերի ներմուծում:	01.05.2023	15.05.2023	340,000
							Ընդամենը 5,000,000

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒԴՄԵՓ ԷՅԱՅ» ՍՊԸ
ք. Աշտարակ, Ե. Շահազիզի 64, 0201

Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2051322102661002
ՀՎՀՀ 05030356
Տնօրեն՝ Գագիկ Թամազյան

Հավելված 2
2022թ. դեկտեմբերի 20-ին
կնքված **ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02** պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի Հավելված 1-ով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

2.4 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2022թ. դեկտեմբերի 20-ին
կնքված **N ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02** պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		Դրամաշնորհային ծրագիր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
														3,750,000	**3,750,000**

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒԴՄԵՓ ԷՅԱՅ» ՍՊԸ
ք. Աշտարակ, Ե. Շահազիզի 64, 0201

Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2051322102661002
ՀՎՀՀ 05030356
Տնօրեն՝ Գագիկ Թամազյան

Հավելված 4
2022թ. դեկտեմբերի 20-ին
կնքված **ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02** պայմանագրի

Պայմանագրի կողմ	Նախարարություն
գտնվելու վայրը հհ _____ հվհհ _____	գտնվելու վայրը _____ հհ_____ հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.Տ.	_____ ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.Տ.

Հավելված 5
2022թ. դեկտեմբերի 20-ին
կնքված **N ԲՏԱՆ-ԴՄ-2022/14-02** պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Մուդմեփ-ը արհեստական բանականության հիմքով աշխատող վեբ հավելված է, որը նախատեսված է մեծ զաղերի կենտրոնների և վաճառքի թիմերի համար: Մուդմեփ օգնականը ավտոմատ կերպով պատասխանում է շատ տրվող հարցերին և կատարում է հաճախորդի նույնականացում թեթևացնելով մասնագետների ծանրաբեռնվածությունը: Ավելի ծավալուն կամ բարդ հարց/առաջարկ ստանալու դեպքում վերլուծելով հարցը ուղղորդում է այն համապատասխան մասնագետին, իրեն արդեն իսկ տալով ինֆորմացիա հաճախորդի, նրա նախորդ կատարած զանգերի և տրված հարցի մասին: Զանգի ամբողջ ընթացքում Մուդմեփ-ի 7 արհեստական բանականության մոդելները վերլուծում են այն և իրական ժամանակում խորհուրդներ տալիս մասնագետին ինչպես և ինչ խոսել հաճախորդի հետ զանգի հաջողության հավանականությունը մեծացնելու համար: Ի հավելում այս ամենի ամբողջ վերլուծված տվյալները ավտոմատ հավաքագրվում են և հետագայում հուշում թե ինչ թաքնված խնդիրներ կան բիզնեսում, ինչպես են իրենց ցուցաբերում մասնագետները հաճախորդների հետ շփման մեջ, պրոդուկտի որ հատվածին է պետք ավելի շատ ուշադրություն դարձնել և այլն: Հավելվածի առաջնային դեմո մոդելը պատրաստվել է ավելի քան 100 մասնագիտական հարցումներ կատարելուց հետո և այս պահին թեստավորման փուլում է: Մուդմեփ Ալֆա 2.0-ը դեմո մոդելի կատարելագործված տարբերակն է որը նախատեսում ենք ավարտել 10.06.2023:
Մուդմեփ Ալֆա 2.0-ը արդեն թույլ կտա այն ներդնել գործող զանգերի կենտրոնում, աշխատանքային պայմաններում թեստավորելու համար: Այն հավելված պետք է լինի 2 նոր մոդելներով և կազմակերպված data base-ով: Ալֆա 2.0 տարբերակին հաջորդելու է արդեն վաճառքի պատրաս տարբերակը:
Դրամաշնորհը թույլ կտա ավարտել ծրագրավորման և դիզայնի այն հատվածները որոնք թիմի անդամների մասնագիտական հմտություններից դուրս են:
Ծրագրի վերջնական նպատակն է ստանալ վաճառքի/սպասարկման քարտեզ, որը մաքսիմիումի կհասցնի հաջող զանգ ունենալու հավանականությունը արդեն արված զանգերի վերլուծական տվյալների վրա հիմնվելով: Մուդմեփ թիմը հավատում է որ ապագայի ստանդարտները պահանջում են յուրահատուկ մոտեցում ցանկացած կամայական վերցրած հաճախորդի հանդեպ, որի ստեղծումն ու ավտոմատացումն էլ ընտրվել է որպես Մուդմեփ-ի հիմնական նպատակ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010 ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	«ՄՈՒԴՄԵՓ ԷՅԱՅ» ՍՊԸ ք. Աշտարակ, Ե. Շահազիզի 64, 0201 Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 2051322102661002 ՀՎՀՀ 05030356 Տնօրեն՝ Գագիկ Թամազյան